ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ

ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Գրական ստեղծագործական աշխատանքը հարատև պրոցես է: Ստեղծագործական զարգացման ընթացքում չի արձանագրվում, թե երբ է այս կամ այն ազգային գրականությունն իր կրած փոփոխությունների հետևանքով մի որակից անցնում մի այլ որակի: Ուստի, անխուսափելիորեն տեղի ունեցած այդ որակափոխությունը իրականում ստույգ, ճշգրտված ժամանակային սահմաններ չի ճանաչում: Գրականության աստիճանական զարգացման առանձին շրջափուլեր մատնանշողը գրականության պատմաբանն է, որը հայտնաբերում է արդեն տեղի ունեցած որակափոխությունը և փորձում իմաստավորել փուլերից յուրաքանչյուրի առանձնահատկությունը: Ներկայումս գիտական շրջանակներում ընդունված է, որ հայ ողջ գրականությունը V դարից սկսած բաժանվում է երեք մեծ շրջափուլերի՝ ա. հայ հին կամ հայ միջնադարյան գրականություն, բ. հայ նոր գրականություն, գ. հայ նորագույն գրականություն:

Ավելորդ չէ նկատել, որ հայ նոր և նորագույն գրականությունների միջև անհամեմատ շատ ավելի տիպաբանական, գրեթե անբաժանելի ընդհանրություններ կան, քան հայ հին և նոր գրականությունների միջև: Բայց այսուհանդերձ, չգիտես ինչու, մերթընդմերթ վեճի նյութ է դառնում առաջին և երկրորդ շրջափուլերի սահմանագծի ժամանակի խնդիրը: Մի բան պարզ է, ինչ ժամանակաշրջան էլ որ մատնացույց արվի, դա լինելու է մոտավոր *կամ* պայմանական, *պայմանական՝ հենց այն պատճառով, որ անցումը մի որակից մի այլ որակի իրականում կատարվում է սահուն կերպով, ժամանակային տևական ընդգրկման ընթացքում, քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների ենթարկվելու եղանակով: Ճիշտ է ասված, որ նորի արմատները հնի մեջ են: Բայց այսուհանդերձ՝ սույն դատողությունը միաժամանակ ենթադրում է, թե հինը հին է, նորը՝ նոր, որը սոսկ արմատներ ունի հնի մեջ: Ոչինչ միանգամից տեղի չի ունենում: Այդպես էլ XVIII դարի գրական զարթոնքն իր ընդերքում սաղմնավորել ու սնունդ է տվել հայ նոր գրականությանը, որի ծնունդը, փաստորեն, տեղի ունեցավ հաջորդ դարում:*

Մի կողմ թողնելով անցյալում մի քանի մտավոր գործիչների հապճեպ արտահայտած կարծիքները՝ նշենք, որ հայ նոր գրականության սկզբնավորման խնդրին առաջինը հանգամանորեն անդրադարձել է Մանուկ Աբեղյանը: 1908 թ. «Արարատ» ամսագրում հրապարակած «Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից (առաջին երեսնամյակ)» հոդվածաշարում նա

այն տեսակետն է արտահայտում, թե «Մեր հնի և նորի բաժանումը լինում է ոչ թե 18-րդ դարում, այլ 16-րդ դարու վերջը և 17-րդի սկզբներում, երբ համատարած իշխում էր ավերակ և թանձր տգիտություն… Անկումը սոսկալի էր, մեր հին քաղաքակրթությունը գրեթե ամբողջապես ոչնչացել էր այդ ժամանակ… Եվ հնի այս մահվան մեջ է, որ սկսում է ծնվել նորը՝ հնի վերածնությամբ»[1]:

Չծանրանանք այն տարօրինակ դատողության վրա, թե հնի վերածնությամբ ծնվում է նորը: Տրամաբանական չէ՞ մտածել, որ եթե վերածնվողը հինն է, ուրեմն այդ վերածնությամբ ապաքինվում, նորոգվում է հենց հինը: Ավելի տարօրինակն այն է, որ Աբեղյանն իր կարծիքը հայտնում է բացառապես հենվելով Առաքել Դավրիժեցու հայտնած այն տեղեկության վրա, թե ինչպես XVI–XVII դարերի սահմանագծում մի Սարգիս եպիսկոպոս և մի Կիրակոս վարդապետ, Սյունիքի մի անմատչելի վայրում հիմնելով կրոնական անապատ, «եղան անապատներ շինելու և հաստատելու սկզբնավորողներ, դրանով էլ պատճառ դարձան վանքերի, եկեղեցիների բարեկարգության և սրանց բնակիչների բարօրության»[2]: Ի դեպ, խոսելով այս մասին, պատմիչը ոչ մի ակնարկ չի անում միաբանների կողմից գիր ու գրականությամբ զբաղվելու կամ գրչական աշխատանքներ կատարելու մասին:

Ըստ երևույթին, Աբեղյանը առանձին կարևորություն է տվել Դավրիժեցու հայտնած տեղեկությանը՝ ելնելով այն վիճակից, որ XX դարի սկզբներին, երբ գրվում էր հոդվածաշարը, բավարար չափով դեռ հայտնաբերված և հրապարակված չէր XVI–XVII դդ. գրական արտադրանքը: Օրինակ, իրենց երկերով դեռ հայտնի չէին Ներսես Մոկացին, Մարտիրոս Ղրիմեցին, Սիմեոն Կաֆացին: Ստեղծագործական ժառանգության ճնշող մասով անծանոթ էր Դավիթ Սալաձորցին: Անհայտ էր նաև այն հսկայական նյութը, որ երկու ստվար հատորներով և «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» վերտառությամբ 1986 և 1987 թվականներին լույս ընծայվեց Հասմիկ Սահակյանի ջանքերով: Եվ պետք է ավելացնել, որ այսքանով դեռ չի սպառվում ձեռագիր ողջ նյութի հրատարակումը: Այնպես որ՝ ինչ-ինչ ժամանակներում գրականության զարգացումը դանդաղելու մասին կարելի է խոսել, բայց ամլության մասին՝ երբեք:

Վերադառնալով «Ուրվագծերում» Աբեղյանի արտահայտած տեսակետին՝ պետք է ավելացնել, որ տասնամյակներ անց հեղինակն ինքը հիմնովին վերանայել է իր կարծիքը: Այս իրողությանն անդրադարձել է աբեղյանագետ Սարգիս Հարությունյանը՝ գիտնականի հայագիտական վաստակի գնահատմանը նվիրված գրքում[3]: Իսկապես, մեծավաստակ հայագետը 1941 թ. Արմֆանի «Տեղեկագրում հրապարակած «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» հոդվածում հայոց հին գրականությունը (ներառյալ Հովհան Վանանդեցի և Հարություն Ալամդարյան) դիտում է որպես հայ հին գրականության վերջին՝ 4-րդ շրջան, այն անվանելով՝ «Եկեղեցական գրականության վերածնություն նոր

---

[1] *Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 545:*

[2] *Ա ռ ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի. Պատմություն, Երևան, 1988, էջ 198:*

[3] *Տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մանուկ Աբեղյան, կյանքը և գործը, Երևան, 1970, էջ 301:*

կրոնական շարժման հետևանքով»[4]: Աբեղյանի վերանայված տեսակետի մասին Ս. Հարությունյանը տվել է հետևյալ ուշագրավ գնահատությունը. «17–19-րդ դարերի գրականությունը հին գրականության եզրափակիչ շրջան դիտելը, կարծում ենք, առավել ճիշտ է և հիմնավոր, քանզի այդ նորոգված գրաբար գրականությունը թեպետ հասարակական ու կուլտուրական նոր շարժումների արգասիք էր, սակայն թե՛ լեզվով, թե՛ բովանդակությամբ և թե՛, մանավանդ, գաղափարներով ամբողջապես հնի կրկնություն ու վերարտադրություն էր, զարգացած հիմնականում կրոնա-եկեղեցական ազդակներով: Իսկապես նոր գրականության շունչը զգացվում է 19-րդ դարի սկզբներին, հատկապես Վանանդեցու և Ալամդարյանի պոեզիայի մեջ, որ փայլուն կերպով հիմնավորում է Աբեղյանը»[5]:

Ս. Հարությունյանի ճիշտ դիտարկումը արժանացել է առարկության, իբր «հեղինակը տարօրինակ ձևով փորձում է Աբեղյանին վերագրել 17–18-րդ դարի գրականությունը հնին հատկացնելու միտում, հանգամանք, որ հակասում է գիտնականի հարցադրումների բուն էությանը»[6]:

*Առարկությունը՝ առարկություն, բայց այստեղ, այնուամենայնիվ, անառարկելին այն է, որ «17–19-րդ դարի առաջին երրորդը ներառյալ» գրականությունը դիտելով «Եկեղեցական գրականության վերածնություն նոր կրոնական շարժման հետևանքով…, նոր գրաբար և աշխարհիկ գրականություն…», Աբեղյանն ինքը դա համարում է «*հայոց հին *գրականության Դ» շրջան (ընդգծումը մերն է – Վ. Ն.): Հապա հոդվածի խորագիրը՝ «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ», որը մատնացույց է անում գիտնականի հայացքը: Սա ինքնին հաստատում է, որ հայ իրականության, ազգային կյանքի պահանջով տեղի ունեցած թեմատիկ-գաղափարական նորոգությունը Աբեղյանը մերժելի չի համարում հին գրականության համար:*

Տեղին է նկատել, որ պնդելով Աբեղյանի՝ իր նախկին տեսակետից հրաժարված չլինելու միտքը՝ Սերգեյ Սարինյանը հենվում է ոչ թե հեղինակի 1940-ական թվականներին հրապարակած որևէ գրության վրա, այլ՝ «Հայոց հին գրականության պատմության» (1946 թ.) 2-րդ հատորից քաղած մի նյութի (էջ 439–440), որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Աբեղյանի 1908 թ. տպագրած «Ուրվագծերից» նույնությամբ վերցված մի հատված[7]:

Իսկապես, իր ձիգ գոյության ընթացքում հայ հին գրականությունը հաճախ է դրսևորել նորոգման միտում: Մի՞թե հոգևոր-եկեղեցական բանաստեղծության փարթամ ծաղկումից հետո գրականության նորոգություն չէր XIV–XVII դդ. սիրերգությունը իր կենսատու թրթիռներով: Մի՞թե թեմատիկ-գաղափարական

---

[4] *Տե՛ս ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1941, №5-6,էջ 86: Տե՛ս նաև Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946, էջ 570:*

[5] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 301:*

[6] *Ս. Ս ա ր ի ն յ ա ն. Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը, Երևան, 1973, էջ 203:*

[7] *Ս. Սարինյանի մեջբերումը հմմտ. «Արարատ», 1908, №10, էջ 892–893 կամ Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. Դ, էջ 547:*

նորոգություն չէին XIII դարում Վարդան Այգեկցու և Ֆրիկի սոցիալական արծարծումները, Մկրտիչ Նաղաշի պանդխտության տաղերը և այլն:

Հայ միջնադարյան գրականության պարբերացման խնդրին անդրադարձել են հայ հին գրականության հարցերով զբաղվող մի քանի հետազոտողներ:

Ըստ Շուշանիկ Նազարյանի՝ XVIII դարը «մի կամուրջ է հնի՝ միջնադարի և նոր ժամանակների միջև: Այդ շրջանում տեղի է ունենում «հնի կրկնությունը» նոր ձևով, նորի համար, նոր ժամանակների, նոր գաղափարների դիրքերից»[8]: Այսինքն՝ գրականագետը գտնում է, որ XVIII դարը և՛ հին է, և՛ նոր: Այստեղ, ճիշտ է, չասված, բայց, այնուամենայնիվ, առկա է «նորի լինելիության արմատները հնի մեջ են» թեզը:

Արտահայտվել է տեսակետ, ըստ որի XVII–XVIII դդ. հայ գրականությունը դիտվում է որպես միջնադարյան գրականություն, որն իր ընդերքում նախադրյալներ է ստեղծել հայ նոր գրականության ձևավորման համար: Այսպես, «17–18-րդ դարերի գրականությունը,– նշել է Հենրիկ Բախչինյանը,– վերածնեց, յուրացրեց ու զարգացրեց միջնադարյան գրական ավանդները և արտահայտելով անցումային շրջանի հայ իրականության հուզական ու գաղափարական բովանդակությունը՝ ճանապարհ հարթեց նոր ժամանակաշրջանի գրականության համար»[9]: Միանգամայն ընդունելի տեսակետ է:

Նման հայացք կա Պողոս Խաչատրյանի կազմած «Գանձարան հայ հին բանաստեղծության» ժողովածուի առաջաբանում: Այստեղ ասված է. «Ժողովածուի վերջին բաժինը անվանել ենք «Նոր բանաստեղծության նախաշեմին»: Այստեղ ներկայացվում է XVIII դարի քնարերգությունը Մխիթար Սեբաստացուց ու Պաղտասար Դպրից մինչև հանճարեղ Սայաթ-Նովա: Այս հարյուրամյակը մտավոր գեղարվեստական խմորումների դար է, հնից դեպի նոր գրականությունը նախապատրաստման և անցման շրջան, երբ գրաբարի, միջին հայերենի տարրերով լեցուն խառը լեզվի և բարբառի հետ բանաստեղծությունը խոսում է նաև նորելուկ աշխարհաբար գրական լեզվով: Սա այն շրջանն է, երբ հին բանաստեղծությունը կնքում է իր ավարտը, և նորը փորձում է իր լինելության շավիղը մտնել: Սայաթ-Նովան կանգնած է հնի և նորի այդ ճամփաբաժանում»[10]:

Այն հանգամանքը, որ XVIII դարում հին բանաստեղծությունը կնքում է իր ավարտը, իսկ «նորը փորձում է իր լինելության շավիղը մտնել», ճիշտ է, իսկ այն, որ XVIII դարի բանաստեղծության ընտրանին այստեղ դիտվել է հայ հին գրականության գանձ, ինքնին ցույց է տալիս, թե ժողովածուի կազմողը ինչ հայացք է ունեցել տվյալ ժամանակաշրջանի հայ գրականության բնույթի մասին:

Արդ, ի՞նչ է իրենից ներկայացնում XVII–XVIII դդ. հայ գրականությունը, հի՞ն է այն, թե՞ նոր: Խնդիրը չի կարելի լուծել անցյալում հայագիտության մեջ արտահայտված կարծիքները կողմնորոշիչներ ներկայացնելով, թեկուզև դրանք լինեն վաստակաշատ, երախտավոր գործիչների տեսակետներ, մանա-

---

[8] *Տե՛ս Շ. Ն ա զ ա ր յ ա ն. Պետրոս Ղափանցի, Երևան, 1969, էջ 153:*

[9] *Հ. Բ ա խ չ ի ն յ ա ն. XVII-XVIII դդ. հայ գրականությունը, Երևան, 1990, էջ 327:*

[10] *Գանձարան հայ հին բանաստեղծության, Երևան, 2000, էջ 8-9 :*

վանդ որ նրանք իրենց ձեռքի տակ ունեցել են շատ ավելի սակավ փաստեր, քան այսօր կան:

Խնդրի համոզիչ լուծման համար արդյունավետ կարող է լինել այդ շրջանի (XVII–XVIII դդ.) գրականության տիպաբանական հատկանիշների համեմատությունը մի կողմից V–XVI դդ. և մյուս կողմից XIX դ. գրականությունների էական, տարակուսանքներ չհարուցող առանձնահատկությունների հետ: Հայ հին գրականության մեջ V դարից գործել են գրական երկու սեռեր՝ վիպական ու քնարական: Հնում թատերագրություն չի եղել: Պիեսներ մեզանում գրվել և տպագրության են արժանացել լոկ XIX դարում: Հին շրջանում վիպական սեռը գլխավորապես դրսևորվում էր պատմագրության, վարքի, վկայաբանության, ներբողյանի, թղթի, առակի ժանրերով, չափածոն՝ շարական երգի, իսկ X դարից սկսած նաև տաղի, այսինքն՝ երգվող չափածո քերթվածի ձևով:

Նշված արձակ և չափածո ժանրերից XVII–XVIII դդ. գործածական էին բոլորը՝ բացառությամբ շարականի, որի վերարտադրման պահանջը դեռ XIII դ. վերջերից «Շարակնոցի» փակվելու հետևանքով այլևս չէր զգացվում: XIX դ. գործում էին գրական երեք սեռեր՝ վեպ, վիպակ, պատմվածք, հուշագրություն, դրամա, կատակերգություն, ողբերգություն, երգ, պոեմ, էլեգիա, սոնետ տեսակներով: XVIII դարում, ի դեմս Պաղտասար Դպրի և Պետրոս Ղափանցու, գրվում են եկեղեցական տոների համար բազմաթիվ հոգևոր տաղեր, որոնց մատուցման հաջորդական կարգը անխախտ կերպով համընկնում է գանձարանային ժողովածուներում ամփոփված նյութերի (գանձ, տաղ, մեղեդի, փոխ, հորդորակ) հերթականությանը:

Սա փաստ է, որ գալիս է հաստատելու, թե XVIII դ. Պաղտասար Դպիրն ու Պետրոս Ղափանցին իրենց ստեղծագործությամբ եղել են հայ հին գրականության ավանդույթների հետևորդ և շարունակող:

XIX դ. հայ բանաստեղծությանը բնորոշ չեն նման հակումները:

Հայտնի իրողություն է, որ V դարից սկսած պատմագրությանը զուգահեռ հայ գրական արձակի մնայուն ժանրերից է դառնում սրբախոսությունը: Նոր գրականության ձևավորումից հետո այս ժանրը չի գործել, մինչդեռ այն իր կենսունակությունը շարունակում էր պահել XVII–XVIII դդ.: Մինչև XVIII դարի վերջը ստեղծվում են բազմաթիվ վկայաբանություններ՝ Սահակ Բրուտեցու, Լույս Գրիգորի, Սահակ Մսիրի, Ղազար Բաբերդցու և ուրիշ նահատակների վկայաբանությունները:

Արձակի կապակցությամբ կարևոր է նկատել մի հանգամանք ևս: Հայ հին գրական արձակը, այդ թվում նաև XVII–XVIII դդ. և՛ սրբախոսությունը, և՛ պատմագրությունը իր ուղղվածությամբ հիմնականում փաստագրական բնույթի արձակ է: Մինչդեռ XIX դ., այսինքն՝ նոր գրականության կազմավորումից հետո ստեղծված արձակը (վեպ, վիպակ, պատմվածք, նովել), չհաշված ձևավորման շրջանի հատուկենտ բացառությունները (մասնավորապես նկատի ունենք Խաչատուր Աբովյանի «Վերքը»), աստիճանաբար յուրացնելով նոր ժամանակների գեղարվեստական սկզբունքները, կյանքի կոնկրետ իրողությունները ջանում էր պատկերել գեղարվեստական ընդհանրացման հիմունքով:

Կարող է հարց ծագել, մի՞թե XVII–XVIII դդ. գրականությունը սոսկ հոգևոր - կրոնական գրականություն է, մի՞թե այս շրջանում գրականությունը չի անդրադարձել այնպիսի խնդիրների, որոնցով այն ընդհանուր եզրեր է հանդես բերում XIX դ. հայ գրականության հետ՝ սեր, հայրենասիրություն, ազատաբաղձություն, սոցիալական խնդիրներ և այլն:

Իհարկե, կան նման ընդհանրություններ: Կան հավերժական թեմաներ, որոնք գրեթե միշտ սնունդ են տվել գրականությանը: Բայց եթե ղեկավարվենք միայն այդ ընդհանրություններով, ուրեմն հայ նոր գրականության սկիզբն առնվազը պետք է դնենք XIII–XIV դդ.՝ Վարդան Այգեկցու, Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու ժամանակները:

XIX դ. բանաստեղծությունը, ստեղծվելով հասարակական զարգացման նոր մակարդակի ու հնարավորությունների պայմաններում, ունի կենցաղավարման մի առանձնահատկություն, որով արմատապես տարբերվում է XVII–XVIII դդ. բանաստեղծությունից:

Դեռ 1916 թ. տպագրված «Հայերեն տաղաչափության մասին» հոդվածում Մ. Աբեղյանն այն միտքն է զարգացնում, թե հնում բանաստեղծները «ոչ միայն երգի խոսքերն էին հորինում, այլև միաժամանակ եղանակը, ուստի ոտանավորը և եղանակի երաժշտական ռիթմը կանոնավորապես բռնում էին իրար»[11]: Նույն տեսակետը նա արտահայտել է նաև այլ առիթով. «Հին ժամանակ, երբ բանաստեղծությունը հորինվում էր երգելով և երգելու համար, երաժշտական եղանակն ու խոսքի չափական ձևը սերտ կապված են եղել իրար հետ…»[12]:

Սույն միտքը ենթակա չէ կասկածի և հաստատվում է «Գանձարան» ժողովածուների համար տաղերի հորինման և դրանց կիրառության ավանդույթով: Այս պատճառով էլ X դարից սկսած տաղ *հասկացությունը ոչ միայն արտահայտում է «*բանաստեղծություն, չափածո ստեղծագործություն*», այլև «*երգ*» իմաստը, այսինքն՝ երգ-բանաստեղծություն: Այսպես է եղել, քանի որ միջնադարում, ի տարբերություն նոր շրջանի, բանաստեղծության հրապարակման, տարածման հիմնական հնարավոր միջոցը եղել է երգը՝ բանաստեղծական հորինվածքի եղանակավոր կատարումը: Իսկապես, ինչպես X դարից ի վեր, այնպես էլ XVII–XVIII դդ. իրենց բանաստեղծությունները կամ ավելի լավ է ասել՝ տաղերը, երգով հրապարակել են և՛ Նաղաշ Հովնաթանը, և՛ Պաղտասար Դպիրը, և՛ Պետրոս Ղափանցին, և՛ Սայաթ-Նովան ու ուրիշները:*

Հակառակ այս կերպի՝ XIX դ. բանաստեղծության (նաև արձակի) հրապարակման ու տարածման հիմնական եղանակն արդեն մամուլն էր, որը XVIII դ., ըստ էության, բացակայում էր: Վերհիշենք, որ հայ մամուլի անդրանիկ «Ազդարարը» հայտնվեց լոկ XVIII դարի վերջին տասնամյակին՝ դարի մահվան շնչում, 1794 թվականին և գոյատևեց ընդամենը 18 ամիս: Հայ մամուլը իսկական զարթոնք ապրեց միայն XIX դ. 30-ական թվականներից հետո՝ մեծապես նպաստելով հայ նոր գրականության վերջնական կազմավորմանը: Այնպես որ, հակառակ հին գրականության կենցաղավարման կերպի՝ անհնարին է հայ

[11] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. Ե, Երևան, 1971, էջ 386:*
[12] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. Բ, Երևան, 1967, էջ 27:*

նոր գրականության գոյությունը պատկերացնել առանց մամուլի խաղացած դերի:

Հայ մշակութային զարգացման մեծ շրջաբաժանումները պայմանավորված են հայոց բազմադարյա պատմական կյանքի ընթացքում տեղի ունեցած ճակատագրական նշանակության երեք կարևոր իրադարձություններով:

Առաջին բացառիկ իրադարձությունը, որով սկզբնավորել է հայ ազգային մշակույթի նախնական շրջանը, եղել է Հայաստանում քրիստոնեության ընդունումն ու ազգային գրերի գյուտը IV–V դարերում:

Երկրորդ կարևոր իրադարձությունը XIX դարի 10-20-ական թվականներին պարսկական տիրապետությունից Արևելյան Հայաստանի ազատագրումն ու Ռուսական կայսրության կազմի մեջ մտնելն է: Այս ակտով Արևելյան Հայաստանը թեպետ դուրս եկավ մի տիրության հպատակությունից և անցավ մի այլ տիրապետության տակ, բայց միաժամանակ ձեռք բերեց անձի և ինչքի ազատ տնօրինության իրավունք ու ազգային մշակույթը զարգացնելու հնարավորություն: Արևելյան Հայաստանի նոր կացությունն իր հերթին, թերևս, որոշ դեր խաղաց արևմտահայության ինչ-ինչ իրավունքների ճանաչման և մշակութային վերելքի գործում: Վերհիշենք, թե ինչ բազմակողմանի մտավոր վերելք ունեցավ հայությունը այս շրջանում, հիշենք նաև հայկական Ազգային սահմանադրության ընդունման փաստը, որ 1863 թ. վավերացվեց սուլթանական Թուրքիայում:

Երրորդ կարևոր իրադարձությունը 1918 թ. հայ անկախ պետականության ստեղծումն էր, պետականություն, որ թեպետ երկու տարի անց խեղվեց բոլշևիկյան Ռուսաստանի կողմից, բայց, այնուամենայնիվ, սառեցման սկզբունքով պահպանեց իր անկախության ստատուսը, որը և ճանաչվեց Խորհրդային Միության քայքայումից անմիջապես հետո:

Այս երեք որոշիչ հանգամանքներն էլ իրենց բնույթով և ուղղվածությամբ նախանշել են հայ գրականության և մշակութային զարգացման մեծ փուլերը՝ հին, նոր և նորագույն:

Քանի որ գրականության և արվեստի զարգացման ամեն շրջաբաժանում իր մեջ անխուսափելիորեն պարունակում է պայմանականության գործոն և միշտ էլ առանձին ուսումնասիրողների կողմից կարող է դիտվել վիճելի, ուստի, կարծում ենք, իմաստ չունի առաջ քաշել հին ու նոր գրականությունների սահմանաբաժանման նոր տարբերակ: Իմաստ չունի մտավոր հասարակության գիտակցության մեջ արմատավորված տեսությունը, որ պայմանականությամբ հանդերձ ամենաընդունելին է, փոխարինել մի այլ տեսակետով և ստեղծել տարակուսանքի ու շփոթության մթնոլորտ:

ВОПРОС О ПОСЛЕДНЕЙ СТАДИИ ПЕРИОДИЗАЦИИ ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

ВАРАГ НЕРСИСЯН

Р е з ю м е

Армянская литература, начиная с V в., имела три периода развития: древнеармянский, новоармянский и новейший армянский. Начиная с XIX в. предметом обсуждений становится вопрос о временной границе между древнеармянским и новоармянским литературными периодами. Несмотря на то, что началом новоармянского литературного периода считается последняя четверть XVIII в., тем не менее, ныне существует также версия о переносе этой границы в начало XVII в. Для объективного решения вопроса не следует опираться на мимолетные суждения арменоведов о предмете спора, а надлежит провести исследование типологических свойств литературы. Данная исследовательская методика дает основание считать, что литература XVII–XVIII вв. своим содержанием, тематикой, жанровым составом и методом публикаций идентична с литературой V–XVI вв. и принципиально отличается от литературы XIX в.